



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՍՇՎԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ԵՐԵՎԱՆԻ
ՀԱՊԱՏԱԿՈՍՄՈՍՔԱՆ

ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇՎԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻԶԵՎ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանի (այսուհետ՝ Կողմ 1) և Երևան համայնքը՝ ի դեմս Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի (այսուհետ՝ Կողմ 2, իսկ միասին հիշատակվելու դեպքում՝ Կողմեր)՝ հաշվի առնելով թանգարանների ոլորտի առաջխաղացման կարևորությունը, կնքեցին սույն հուշագիրը հետևյալի մասին.

1. ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կողմերը նախատեսում են կազմակերպել իրենց ենթակայությամբ գործող թանգարանների համատեղ ցուցադրություններ, ծրագրեր, միջոցառումներ, ոլորտային մասնագետների վերապատրաստումներ, ինչպես նաև այլ մշակութային միջոցառումներ:

1.2 Սույն հուշագրով կողմերը պայմանավորվում են իրենց լիազորությունների շրջանակում օժանդակել ՀՀ քաղաք Երևան, Հանրապետության 32 հասցեում գտնվող հուշարձան-շենքում ժամանակակից արվեստագետ Մարկոս Գրիգորյանի ստեղծագործությունների ցուցադրմանը:

2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Կողմերը պայմանավորվում են, սույն հուշագրին համապատասխան, համագործակցություն իրականացնել իրենց լիազորությունների շրջանակներում:

2.2. Կողմերն իրենց լիազորությունների շրջանակում համագործակցում են նաև երկկողմ հետաքրքրություն ներկայացնող մշակութային և ուսումնակրթական բնույթի ծրագրերի, այդ թվում՝ ցուցադրությունների, գիտական կոնֆերանսների, սեմինարների, խորհրդակցությունների կազմակերպման, գիտական, մասնագիտական գրականության, մեթոդական ձեռնարկների, աշխատությունների, պարբերականների և այլ նյութերի փոխանակման, հրատարակչական գործունեության իրականացման, համատեղ աշխատանքային խմբերի ձևավորման գործում:

2.3 Կողմերն անձամբ կամ իրենց ներկայացուցիչների միջոցով միմյանց միջև կհաստատեն մշտական կապ և կձեռնարկեն միջոցներ՝ սույն հուշագրի արդյունավետ կատարումն ապահովելու նպատակով:

2.4. Կողմ 1-ը համաձայնում է՝

Իրականացնել Մարկոս Գրիգորյանի ծննդյան 100-ամյակին, ինչպես նաև կյանքին և գործունեությանը վերաբերող ցուցադրություն, ժամանակավոր ցուցահանդեսներ և միջոցառումներ:

2.5. Կողմ 2-ը համաձայնում է՝

Ապահովել ՀՀ քաղաք Երևան, Հանրապետության 32 հասցեում գտնվող հուշարձան-շենքում Մարկոս Գրիգորյանի ստեղծագործությունների ցուցասրահի կազմակերպման համար տարածքի տրամադրումը, վերանորոգումը և անխափան օգտագործումը:

3 ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Կողմերը պարտավորվում են ձեռնարկել բոլոր միջոցները սույն հուշագրով ստանձնած իրենց պարտականությունները բարեխղճորեն, Կողմերի միջև համաձայնեցված ժամկետներում կատարելու նպատակով:

4 ՀՈՒՇԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից և գործում է 5 տարի ժամկետով:

4.2. Սույն հուշագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ ենթադրվող դադարեցման օրվանից ոչ ուշ քան 1 (մեկ) ամիս առաջ մյուս Կողմին գրավոր ծանուցմամբ:

5. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Սույն հուշագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ, որը կհանդիսանա սույն հուշագրի անբաժանելի մասը:


5.2. Կողմերն առանձին դեպքերում, իրենց լիազորությունների շրջանակում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, փոխադարձ համաձայնությամբ, սույն հուշագրով նախատեսված նպատակների ապահովման համար, լրացուցիչ ծախսեր նախատեսող որոշակի գործողություններ կարող են իրականացնել գրավոր համաձայնագրեր կնքելու միջոցով:

5.3. Կողմերը համաձայնում են, որ սույն հուշագիրը չի բացառում համագործակցության այնպիսի ձևերի հնարավորություն, որոնք սահմանված չեն սույն հուշագրում, սակայն համապատասխանում են սահմանված նպատակներին:


5.4. Սույն հուշագիրը կնքված է հայերեն լեզվով, հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

Հայաստանի Հանրապետության
կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն

Նախարար՝ Ժ. Անդրեասյան



Երևան համայնք



Քաղաքապետ՝ Տ. Ավինյան